

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՊԵՏՐՈՍ ՇԻՐԻՆՕՂԼՈՒԻՆ  
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ  
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ  
ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԻԱԿՆ  
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾԻ  
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՊԵՏՐՈՍ ՇԻՐԻՆՕՂԼՈՒ,  
ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՈՒՐՔԻԱ**

Փառք ենք վերառաքում առ Բարձրեայն Աստուած, որ ամենուր մեր ժողովրդի զաւակաց հոգիներում մշտաբարուն է սերը հանդէպ ազգային ու եկեղեցական մեր աւանդներն ու սրբութիւնները, եւ զօրեղ է հաւատն առ Աստուած նրանց կենդանի գործերով:

Գոհունակութիւն էր Հայրապետիս համար Կ. Պոլսի հայոց Պատրիարքութիւն կատարած Հովուապետական Մեր այցի ընթացքին ճանաչել Ձեզ եւ հաւատաւոր հայորդոյ ազգանպաստ ու եկեղեցանուէր յանձնառութիւնները, որոնք զարդարում են Ձեր կեանքի ճանապարհը եւ պանծացնում Ձեր անունը՝ որպէս արժանատւ ու նուիրեալ զաւակը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Տարիներ շարունակ Դուք հոգեւոր ու նիւթական Ձեր կարողութիւններն ի սպաս էք դնում պոլսահայութեան ազգային-եկեղեցական կեանքի բարգաւաճմանն ի խնդիր: Ծառայաւէր ոգով զօրացեալ՝ առատաձեռն նուիրաբերութիւններ էք կատարում Պատրիարքութեան եկեղեցիների վերանորոգութեան ու պայծառութեան համար, Ձեր սրտաբուխ բարերարութիւններով շարունակում էք օժանդակել պոլսահայ համայնքի հոգեշէն ու ազգանպաստ ծրագրերի իրագործմանը: Ձեր ազնիւ գործերը, որոնք մեծապէս նպաստում են համայնքային կեանքի աշխուժացմանը, վկայութիւն են Ձեր մեծ եկեղեցանուիրումի եւ աստուածսիրութեան: Արդարեւ, վառ է Ձեր հոգում գիտակցութիւնը, որ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու շուրջ համախմբումով մեր ժողովուրդը անխաթար պիտի պահպանի իր հոգեւոր, ազգային ու մշակութային կեանքը:

Յարգարժան Տիար Շիրինօղլու, Տիրոջ օրհնութեամբ բեղուն ու արգասաւոր է Ձեր ծառայութիւնը նաեւ՝ որպէս Սուրբ Փրկիչ հիւանդանոցի Հոգաբարձութեան Խորհրդի ատենապետ: Ձեր ձեռնհաս ղեկավարութեան եւ նիւթական մեծ աջակցութեան շնորհիւ առաւել արդիւնատրուել է հիւանդանոցի առաքելութիւնը՝ ապաքինման կարօտեալ անձանց հոգեւոր ու մարմնական կազդուրում եւ հոգու սէր ու ջերմութիւն բաշխելով: Մենք սիրով յիշում ենք Մեր այցը Ս. Փրկիչ ազգային հիւան-

դանոց եւ նրա հովանու ներքոյ Ձեր կողմից հաստատուած «Պետրոս Շիրինօղլու» թանգարան, երբ անկեղծ գոհունակութիւն ապրեցինք՝ տեսնելով Ձեր կատարած նուիրեալ աշխատանքը, մեր հոգեւոր գանձերի, ազգային արժէքների հանդէպ Ձեր որդիական նախանձախնդրութիւնը:

Համայն հայութեան նուիրական սրբօրրանից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ ազգային-եկեղեցական մեր կեանքում Ձեր ծառայութիւնների բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սուրբաֆեանի միջնորդութեանը, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

### Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Տէրն Ամենակալ, բարեխօսութեամբ առաքելապատիւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մեր Հայրապետի, հանապազ օրհնութիւն բաշխի Ձեզ եւ Ամենախնամ Իր Աջի ներքոյ շէն ու երջանիկ պահի ու պահպանի ընտանեկան Ձեր յարկը՝ շնորհելով յարանորոգ յաջողութիւններ հայրենանուէր ու եկեղեցաշէն Ձեր բարի գործերին:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

### Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Յունիսի  
յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌԼԾԵ  
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի  
ընդ համարաւ 372